Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» նոյեմբերի 2009 թ. N---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ, ԽՍՀՄ ՊԱՏՎԱՎՈՐ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՐՏԻՆՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. օգոստոսի 31-ի N551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ԽՍՀՄ պատվավոր էներգետիկ Վլադիմիր Մարտինովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի 31-րդ շենքի VII մուտքի շքամուտքի պատին տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող
աշխատանքների, առողջապահության, սոցիալական
պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Ասատրյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ, ԽՍՀՄ ՊԱՏՎԱՎՈՐ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՐՏԻՆՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ԽՍՀՄ պատվավոր էներգետիկ Վլադիմիր Մարտինովի վաստակը: Նա 4 մենագրությունների և 60 գիտական աշխատանքների հեղինակ է: Նրա գիտական աշխատանքները, որոնք նվիրված են հիդրոռեսուրսների և էլեկտրոէներգիայի տեխնոլոգիաների օպտիմիզացմանը, 1946թ. արժանացել են Համամիութենական մրցույթի առաջին մրցանակ, իսկ 1950թ.՝ ակադեմիկոս Վեդենևի անվան Համամիութենական մրցանակի:

Ինչպես նաև հաշվի են առնվում ՀՀ «Էլեկտրոէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ /22.07.2009թ./, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան /07.09.2009թ./, Հայկական տեխնոլոգիական ակադեմիայի /16.09.2009թ./ միջնորդությունները Վլադիմիր Մարտինովի հիշատակը հավերժացնելու համար:

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ **Ա. Ասատրյան**